ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 սեպտեմբերի 2023 թ. N 289-Ա

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԸ ՏՎՅԱԼ ՇԵՆՔԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 30-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վրա կառուցված բազմաբնակարան շենքի պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասը տվյալ շենքի բնակարանների և (կամ) ոչ բնակելի տարածքների սեփականատերերին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով անհատույց փոխանցման կարգի մասին» N 1855-Ն որոշումը՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի՝ (քաղաք Ջերմուկ և գյուղ Կեչուտ) բազմաբնակարան շենքերի պահպանման և սպասարկման համար առանձնացված հողամասերը ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով անհատույց փոխանցել տվյալ շենքերի բնակարանների և (կամ) ոչ բնակելի տարածքների սեփականատերերին (այսուհետ՝ բազմաբնակարան շենքի սեփականատերեր):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված հողամասեր են համարվում՝

ա) կցակառույցներ չունեցող բազմաբնակարան շենքի համար՝ շենքի պարագծով ինչպես անմիջականորեն շենքի տակ գտնվող հողատարածքը, այնպես էլ սալվածքի չափով (մինչև 1,5 մետր լայնությամբ) հողաշերտը, եթե այն չի հանդիսանում ճանապարհ, փողոց կամ դրանց հարող հատված կամ այլ անձի սեփականություն հանդիսացող հողամաս.

բ) օրինական և ինքնակամ կցակառույցներ ունեցող բազմաբնակարան շենքի համար՝ ինչպես սույն որոշման 2-րդ կետի «ա» ենթակետում նշված հողատարածքը, այնպես էլ օրինական կցակառույցի պարագծով դրա տակ գտնվող հողատարածքը, եթե այն չի հանդիսանում այլ անձի սեփականություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից և տարածվում է 2006 թվականի նոյեմբերի 30-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2023 թ. սեպտեմբերի 4
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 սեպտեմբերի 2023 թ. N 290-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Ջերմուկ համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 21-ի N 37-Ա որոշմամբ՝ ***որոշում եմ՝***

1.Համայնքի բյուջեում հավելյալ եկամուտ ապահովելու և համայնքային ծրագրեր իրականացնելու նպատակով Ջերմուկ համայնքի կամ «ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի սեփականություն հանդիսացող՝ սույն որոշման հավելվածում նշված մեքենա-մեխանիզմները ուղղակի վաճառքով օտարելու նպատակով տալ հայտարարություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2023 թ. սեպտեմբերի 4
Ջերմուկ

Հավելված
Ջերմուկ համայնքի ղեկավարի
2023 թվականի սեպտեմբերի 4-ի N 290-Ա որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ջերմուկի համայնքապետարանը հայտարարում է Ջերմուկ համայնքի կամ «ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի սեփականություն հանդիսացող մեքենա-մեխանիզմները ուղղակի վաճառքով օտարելու մասին

1) Բեռնատար ավտոմեքենա, մակնիշը՝ ZIL KO-713 (ZIL 431412, թողարկման տարեթիվը՝ 1991 թ., պետհամարանիշը՝ 214LL70, շարժիչի հզորությունը՝ 150 ձիաուժ, վաճառքի գինը՝ 3230000 դրամ:
2) Բեռնատար ավտոմեքենա, մակնիշը՝ GAZ KO-413 (GAZ 5314), թողարկման տարեթիվը՝ 1989 թ., շարժիչի հզորությունը՝ 120 ձիաուժ, վաճառքի գինը՝ 382500 դրամ:
3) Բեռնատար ավտոմեքենա, մակնիշը՝ GAZ KO-413 (GAZ 53) թողարկման տարեթիվը՝ 1990 թ., շարժիչի հզորությունը՝ 120 ձիաուժ, վաճառքի գինը՝ 382500 դրամ:
4) Անիվավոր տրակտոր, մակնիշը՝ SAME-603, թողարկման տարեթիվը՝ 2006թ., շարժիչի հզորությունը՝ 55 ձիաուժ, վաճառքի գինը՝ 4930000 դրամ:
5) Թրթուրավոր տրակտոր, մակնիշը՝ ԴS-75, թողարկման տարեթիվը՝ 1981., շարժիչի հզորությունը՝ 90 ձիաուժ, վաճառքի գինը՝ 382500 դրամ:

Ցանկացողները ներկայացնում են դիմում Ջերմուկ համայնքի ղեկավարին՝ կցելով անձնագրի պատճեն (եթե ֆիզիկական անձ է) կամ հիմնադիր փաստաթղթերը (եթե ընկերություն է): Վաճառքի հանված տրանսպորտային միջոցներին կարելի է ծանոթանալ տեղում, այլ պայմանների ծանոթանալու համար կարելի է զանգահարել 060747077 հեռախոսահամարներով: Գնորդը պարտավոր է դիմումը ներկայացնելու օրվանից 10 օրվա ընթացքում ամբողջապես վճարել վաճառքի հայտարարված գումարը և կնքել առուվաճառքի պայմանագիր:

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 սեպտեմբերի 2023 թ. N 291-Ա

ՀԱՆԳՈՒՅՑԱԼ ԱՆԱՍՏԱՍ ԱՐՍԵՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգով և հաշվի առնելով Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի նախկին բնակիչ, հանգուցյալ Անաստաս Արսենյանի իրավահաջորդ Լիլիթ Անաստասի Արսենյանի դիմումը (մտից N 1485, 29.08.2023 թ.) ***որոշում եմ՝***

1. Հանգուցյալ Անաստաս Արսենյանին սեփականության իրավունքով պատկանող Ջերմուկ քաղաքի Ազատամարտիկների փողոցի վրա գտնվող անշարժ գույքին՝ ավտոտնակին, տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, քաղաք Ջերմուկ, Ազատամարտիկների փողոց 5-րդ փակուղի N 14:

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2023 թ. սեպտեմբերի 5
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 սեպտեմբերի 2023 թ. N 292-Ա

ՀԱՆԳՈՒՑՅԱԼ ՍԵՐԳԵՅ ԿԱՐԱՈԳԼԱՆՈՎԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգով և հաշվի առնելով հանգուցյալ Սերգեյ Ալեքսանդրի Կարաոգլանովի իրավահաջորդների ներկայացուցիչ Արփինե Եղիկյանի դիմումը (մտից N 1500, 31.08.2023 թ.) ***որոշում եմ՝***

1. Հանգուցյալ Սերգեյ Ալեքսանդրի Կարաոգլանովին սեփականության իրավունքով պատկանող Ջերմուկ քաղաքի Մաշտոցի փողոցի վրա գտնվող (նախկին հասցեն՝ ք. Ջերմուկ, Ձախափնյակ 1/2) անշարժ գույքին՝ հողամասին, տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, քաղաք Ջերմուկ, Մ. Մաշտոցի փողոց N 14:

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2023 թ. սեպտեմբերի 7
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 սեպտեմբերի 2023 թ. N 293-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 27-Ի N 266-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներին համապատասխան՝ ***որոշում եմ***՝

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2023 թվականի հուլիսի 27-ի «Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող Գնդեվազ գյուղում գտնվող 2,61655 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասը որպես առանձին միավոր ճանաչելու և համայնքային սեփականություն գրանցելու մասին» N 266-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝ որոշման 1-ին կետում՝ «2023GPEP7B» ծածկագիրը փոխարինել «2023RUSUY2» ծածկագրով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2023 թ. սեպտեմբերի 7
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 սեպտեմբերի 2023թ. N 294-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ՈՒ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերի, Ջերմուկի համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 18-ի N 89-Ն և դեկտեմբերի 23-ի N 100-Ն որոշումների, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Հարություն Հովհաննիսյանի հայտը (մտից՝ N 1555, 2023 թվականի սեպտեմբերի 8)՝ ***որոշում եմ՝***

1. Անհատ ձեռնարկատեր Հարություն Հովհաննիսյանին տալ 2023 թվականի ընթացքում Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցի N 22/1/1,22/2 հասցեում գտնվող ռեստորանում հանրային սննդի կազմակերպման և իրացման ու ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություններ (Թույլտվություն N 63 և N 64):

2. Անհատ ձեռնարկատեր Հարություն Հովհաննիսյանին պարտավորեցնել վճարելու տեղական տուրք Ջերմուկի համայնքապետարանի

ա/ 900365031435 հաշվեհամարին՝ 15000 (տասնհինգ հազար) դրամ՝ հանրային սննդի կազմակերպման և իրացման համար՝ եռամսյակի հաշվարկով,

բ/ 900365031336 հաշվեհամարին՝ 18750 (տասնութ հազար յոթ հարյուր հիսուն) դրամ ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի համար՝ եռամսյակի հաշվարկով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Հարություն Հովհաննիսյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից և տեղական տուրքի յուրաքանչյուր տեսակի վճարման առկայությամբ՝ ուժի մեջ է մինչև ս/թ դեկտեմբերի 30-ը:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2023 թ. սեպտեմբերի 14
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 սեպտեմբերի 2023 թ. N 295-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,36024 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ***՝

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող Գնդեվազ գյուղում գտնվող 0,36024 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասը, հողատեսքը՝ արոտավայր, ճանաչել որպես առանձին գույքային միավոր և ներկայացնել իրավունքի պետական գրանցման. չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023ZCHGLF:

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2023 թ. սեպտեմբերի 19
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 սեպտեմբերի 2023թ. N 296-Ա

ՍՈՒՐԻԿ ՎԱՂԱՐՇԱԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ՝ ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան՝ հաշվի առնելով Ջերմուկ համայնքի բնակիչ Սուրիկ Վաղարշակի Սարգսյանի դիմումը (մտից՝ N 1608, 18.09.2023 թ.) ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 23/1-ին շենքում գտնվող բնակարանին նախկինում տրված հասցեի՝ ք. Ջերմուկ, Ձախափնյակ-23ա շենքի թիվ 1 բնակարան, ճշտման նպատակով այն վերահասցեավորել՝

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Մ. Ստեփանյան փողոց 23/1-ին շենք N 1:

2. Սույն որոշումը ենթակա է գրացման ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2023 թ. սեպտեմբերի 20
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 սեպտեմբերի 2023թ. N 297-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՄԵԼՍԻԿ ՍԱՐԳՍԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի, համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի և բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն, 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն ու Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 408 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի, հաշվի առնելով Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի բնակիչ Մելսիկ Սարգսի Առաքելյանի դիմումը (մուտք՝ 2023 թվականի սեպտեմբերի 19-ի N 1616) և ՀՀ Կադաստրի Կոմիտեի՝ Գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին N 11092023-10-0187 որոշումը՝ ***որոշում եմ՝***

1. Փոփոխել Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի բնակիչ Մելսիկ Սարգսի Առաքելյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2012 թվականի մայիսի 22-ի N 22052012-10-0044 վկայական) Ջերմուկ քաղաքի Երևանյան խճուղու 20/1 հասցեում գտնվող անշարժ գույքի սպասարկման համար առանձնացված 1,28 հա մակերեսով բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը որպես խառը կառուցապատման հողամասի՝ այն համապատասխանեցնելով ՎԱՅՈՑ ՁՈՐ–1 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագծին:

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մելսիկ Սարգսի Առաքելյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 սեպտեմբերի 2023թ. N 298-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 24-Ի N 73-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներին համապատասխան՝ ***որոշում եմ***՝

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2022 թվականի մարտի 24-ի ««ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկին նախագծման թույլտվություն տալու մասին» N 73-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝ որոշման 1-ին կետի «գ» ենթակետով տրամադրված N 10 նախագծման թույլտվության մեջ «***Օբյեկտ***» հատվածում «հենապատ /սվաղով/» բառերը փոխարինել «մետաղական ցանկապատ» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և տարածվում է 2023 թվականի մայիսի 16-ից հետո առաջացած հարաբերությունների վրա:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2023 թ. սեպտեմբերի 25
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 սեպտեմբերի 2023թ. N 299-Ա

«ՋԵՐՄՈՒԿԻ ԿԱՐԻՏԱՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասի, հաշվի առնելով «Ջերմուկի Կարիտաս» ՍՊ ընկերության տնօրեն Ս. Ստեփանյանի դիմումը (մտից 1630, 22.09.2023 թ.)՝ ***որոշում եմ***՝

1. Կողմերի համաձայնությամբ, վաղաժամկետ՝ ս/թ հոկտեմբերի 1-ից, լուծել Ջերմուկ համայնքի և «Ջերմուկի Կարիտաս» ՍՊ ընկերության միջև 2018 թվականի դեկտեմբերի 14-ին կնքված (վավերացված է 14.12.2018 թ. «Վայոց ձորի մարզ» նոտարական տարածքի նոտարի N 488 սեղանամատյանում) Ջերմուկ քաղաքի Շլաքահանքի փողոցի N 5 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 1,29827 հա մակերեսով արդյունաբերական նպատակային նշանակությամբ հողամասի (գործառնական նշանակությունը՝ ընդերքի օգտագործման համար, կադաստրային ծածկագիրը՝ 10-002-0571-0010) վարձակալության պայմանագիրը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2023 թ. սեպտեմբերի 26
Ջերմուկ